



Ք. Երևան, 9 հուլիսի 2013թ

## Ընդլայնման և Եվրոպական հարևանության քաղաքականության հանձնակատար Շտեֆան Ֆյուլեն հուլիսի 10-ին կժամանի Հայաստան

*Ընդլայնման և Հարևանության քաղաքականության Եվրոպական հանձնակատար Շտեֆան Ֆյուլեն, ս.թ. հուլիսի 9-ից 12-ը կայցելի Հայաստան և Վրաստան: Այցի ընթացքում նախատեսվում է քննարկել երկու պետությունների և Եվրոպական միության միջև համագործակցությանն առնչվող հարցեր և Ասոցացման համաձայնագրերի և դրանց մասը հանդիսացող Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու համաձայնագրերի բանակցությունների վերջնական փուլի առաջընթացը՝ Վիլնյուսում կայանալիք գազաթափոցի ընթացքում համաձայնագրերի նախաստորագրմանն ընդառաջ:*

Հայաստանում՝ հուլիսի 10-ին հանձնակատար Ֆյուլեն հանդիպումներ կունենա նախագահ Սերժ Սարգսյանի, վարչապետ Տիգրան Սարգսյանի, արտգործնախարար Եդվարդ Նալբանդյանի, Էկոնոմիկայի, ֆինանսների, կրթության և գիտության նախարարների հետ, ինչպես նաև ընդդիմադիր կուսակցությունների, քաղաքացիական հասարակության, հետազոտական կենտրոնների ներկայացուցիչների և երիտասարդների հետ:

*«Վիլնյուսյան գազաթափոցի նախաշեմը շրջադարձային փուլ է, որի ընթացքում ակնկալում ենք ընդհանուր արժեքների վրա հիմնված համագործակցության սերտացում մեր գործընկերների հետ, սպառնալիքով, որ համագործակցության պտուղների կրողը լինի անհատ քաղաքացին: Մա նաև առիթ է ընդգծելու, որ Եվրոպական միությունն ու իր անդամ պետությունները շարունակում են հավատարիմ մնալ Հայաստանին ու հայ ժողովրդին օժանդակելու իրենց հանձնառությանը»,* այցի նախօրեին ասաց հանձնակատար Շտեֆան Ֆյուլեն:

### Հայտարարություն մամուլի համար

Մամուլի ներկայացուցիչները հնարավորություն կարող են հարցեր ուղղել հանձնակատարին՝ Քաղաքացիական հասարակության, հետազոտական կենտրոնների և մամուլի հետ հանրային հանդիպման ընթացքում, որը կկայանա **հուլիսի 10-ին, ժամը 16:10-ին Սարիթթե հյուրանոցի Տիգրան մեծ սրահում:**